372.3

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՎԵԲ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ՆՈՐԱՐԱՐ ԳՈՐԾԻՔ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ

Ասատրյան Սամվել
ԵՊՀ, Հայաստան
Թադևոսյան Արթուր
ՀՊՄՀ, Հայաստան

Համառոտագիր: Հոդվածում ներկայացված է նախադպրոցական տարիքի երեխաների ընդհանուր զարգացվածության ապահովման էլեկտրոնային վեբ համակարգի կիրառման առանձնահատկությունը, որն իր տեսակով հայ իրականության մեջ եզակի հեղինակային է, կիրառման տեսանկյունից՝ հեշտ: Հիմնավորված է, որ մշակված էլեկտրոնային վեբ համակարգի կիրառությունը նախադպրոցական տարիքի երեխաների ընդհանուր զարգացվածության ապահովման գործընթացում արդյունավետ է, ինտերակտիվ, ապահովում է անձնակողմնորոշիչ մոտեցում, ողջ գործընթացը կառավարելի է, ու յուրաքանչյուր երեխա ինքն է ընտրում իր գործունեության հաջորդականությունը, տեմպը: Այս ամենն էլ ապահովում է ողջ գործընթացի անհատականացման սկզբունքը:

Բանալի բառեր: Նախադպրոցական կրթություն, տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաներ, ընդհանուր զարգացվածություն, ՏՀՏ գործիքներ, ուսուցում, դաստիարակություն:

Ներածություն: Բազմաթիվ հետազոտությունների արդյունքները վկայում են, որ մարդու կյանքում եղած բազմաթիվ խնդիրների արմատները տանում են դեպի մանկություն: Հասարակության մեջ մարդու ինքնահաստատման, սոցիալական դերի ու հարմարման հիմնահախնդիրները պայմանավորված են նախադպրոցական տարիքում երեխաների առանձնահատկություններով:

Նախադպրոցական տարիքում երեխայի հոգեկան ենթակառուցվածքները, այդ թվում՝ նաև անձը, միասնաբար գտնվում են մեկ ամբողջական, ինտեգրված վիճակում, որում դժվար է և սկզբունքորեն սխալ տարանջատել նրա հոգեկանի տարբեր կողմերը, քանի որ մեկը մյուսի հետ սերտորեն փոխկապված են և փոխազդված:

Նախադպրոցական ուսուցումը այն հիմնաքարն է, որի որակից է կախված երեխայի հետագա ուսուցումը: Սա նախադպրոցական մանկավարժի համար հատուկ պատասխանատվություն է սահմանում: Նրա խնդիրն է ոչ միայն հաշվել ու գրել սովորեցնել, այլ նաև երեխայի հոգեկանի հիմքերը ամրացնել, բացահայտել նրա լավագույն որակները, ուսումնական գործունեության ուղիները ցույց տալ: Հենց վերջինն էլ հատկապես կարևոր է այժմյան արագ փոփոխվող, տեղեկատվությամբ հեղեղված աշխարհում: Պետք է սովորեցնել երեխային աշխատել տեղեկատվության հետ, սովորեցնել սովորել:

Նախադպրոցական տարիքում երեխան սկսում է ճանաչել առարկաների նմանությունը և տարբերությունը, ձևերն ու չափերը՝ ելնելով նրանց առանձնահատկություններից: Այս առումով նախադպրոցական տարիքի երեխաների հետ աշխատանքում պետք է ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ կզարգանան նաև այդ երեխաների՝ դեռևս նոր ձեռք բերվող անձնային հատկանիշները՝ ինքնուրույնություն, ինչ-որ նոր բան սո-

վորելու հակում, հետաքրքրասիրություն: Այս տարիքից պետք է ակտիվորեն զարգացնել երեխայի համարձակ ստեղծականությունն ու երևակայությունը, ուշադրությունն ու մտածողությունը: Երեխաները հիմնականում ընկալում են զգայարանների միջոցով, ուստի անհրաժեշտ է կազմակերպել այնպիսի խաղեր, որոնք կլինեն տեսողական, զգայական, դիդակտիկ:

Հիմնախնդիրը: Տեղեկատվական այս դարաշրջանում կրթության բնույթի մեջ կատարվող արմատական փոփոխությունը սերտորեն առնչվում են տեղեկատվության և հաղորդակցության արդի միջոցների զարգացմանն ու տարածմանը: Հատուկ հրատապություն ունի կրթության ոլորտում ՏՀՏ-ի կիրառման և զարգացման հարցը զարգացող կամ նվազ զարգացած երկրների համար: Արդյո՞ք այն երկրները, որոնք դժվարին պայքար են մղում աղքատության և տնտեսական հետամնացության դեմ, կարող են իրենց թույլ տալ կրթության ոլորտում ՏՀՏ-ի կիրառման և տարածման մասին մտածելու շռայլությունը՝ հսկայական միջոցներ վատնելով նման ծրագրերի իրականացման համար: Սրանից զատ՝ հետխորհրդային երկրների մեծ մասը, այդ թվում՝ Հայաստանը, ունի առանձնահատուկ խնդիրներ: Բավական բարձր կրթական մակարդակ և ավանդույթներ ունեցող հասարակությունները պարտադրված են կատարել հիմնարար վերագնահատումներ և փոփոխություններ նաև կրթության ոլորտի տարբեր մակարդակներում:

Մյուս կողմից էլ ՀՀ կրթության բոլոր մակարդակներում անցում է կատարել համընդհանուր ներառականության, և այս ամենի հիմքում հարցեր են առաջանում՝ **ինչպե՞ս են ՏՀՏ-ները կիրառվում նախադպրոցական տարիքի երեխաների հետ աշխատանքում, կամ ինչպիսի՞ ազդեցություն են գործում դրանք նախադպրոցական տարիքի երեխաների ընդհանուր զարգացվածության վրա**: Այս հիմնահարցերն են ժամանակակից շատ հետազոտողների ուշադրության կիզակետում, որոնք դիտարկում են թե՛ հոգեբանական, թե՛ առողջաբանական, թե՛ տեխնիկական, և թե՛ մանկավարժական տեսանկյուններից:

Նպատակը: Մեր ուսումնասիրության նպատակն է մշակել և փորձարկել էլեկտրոնային վեբ համակարգ, որը կարող է կիրառվել նախադպրոցական տարիքի երեխաների ընդհանուր զարգացվածության ապահովման գործընթացում:

Հիմնախնդրին առնչվող այլ հետազոտությունների և հրատարակությունների կարճ վերլուծություն: Նախադպրոցական կրթության ոլորտում ՏՀՏ-ների կիրառման առանձնահատկություններին իրենց հետազոտություններն են իրականացրել թե՛ արտասահմանյան, թե՛ հայրենական բազմաթիվ հեղինակներ: Մասնավորապես Ի. Կալաշը [3] անդրադարձ է կատարել ՏՀՏ-ների հնարավորություններին նախադպրոցական կրթության համակարգում՝ կատարելով համեմատական վերլուծություն ավանդական ուսուցման հետ: Հատկանշական անդրադարձ է կատարել Ք. Յանգը իր աշխատություններում՝ դիտարկելով ՏՀՏ-ների, մասնավորապես համացանցից երեխաների կախվածության վնասակարությունը [7]: Կրթության տեղեկատվայնացման գործընթացին են նվիրված Վ. Պ. Բեսպալկոյի [1], Ե. Ա. Վասիլևայի [2], Ա. Վ. Սմիրնովի [4], Ս. Մ. Ասատրյանի, Ն. Դ. Գրիգորյանի և այլոց հետազոտությունները: Նախադպրոցական տարիքի երեխաների հետ աշխատանքի էրգոնոմիկական հարցերին են անդրադառնում արտասահմանյան մի շարք հեղինակներ [5, 6]: Սակայն այսօր էլ հայ իրականության մեջ սակավ են այն հետազոտությունները, որոնք իրական գործիքներ են առաջարկում մասնագետներին՝ հեշտացնելով վերջիններիս աշխատանքը, դարձնելով երեխա-մանկավարժ փոխգործակցությունն առավել հետաքրքիր:

Հետազոտության նորույթ: Երեխա-մանկավարժ փոխգործակցությունն առավել հետաքրքիր, ինտերակտիվ դարձնելու նպատակով մշակվել է նախադպրոցական տարիքի երեխաների ընդհանուր զարգացվածության ապահովման աջակցման էլեկտրոնային վեբ համակարգ, որն իր տեսակով եզակի է հայ իրականության մեջ, հեշտ է կիրառման տեսանկյունից և ապահովում է բարձր արդյունավետություն:

Նկ. 1. Համակարգի առաջնաէջ

Հիմնական նյութի շարադրում:

Ակադեմիկոս Ա. Պ. Սեմյոնովը նշում էր, որ ժամանակակից կրթության կարևորագույն խնդիրն է սովորեցնել մարդուն ապրել տեղեկատվական աշխարհում, դա պետք է որոշիչ լինի յուրաքանչյուր մանկավարժի աշխատանքում: Այդ նպատակների իրականացման համար նախադպրոցական հաստատություններում աշխատող դաստիարակների աշխատանքային գործունեության մեջ ՏՀՏ միջոցների կիրառումը անհրաժեշտություն է դառնում: Նախադպրոցական տարիքի երեխաների ուսումնական գործընթացում ՏՀՏ-ների օգտագործման նպատակահարմարության մասին են խոսում նրանց տարիքային այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են տեսողական-պատկերավոր մտածողության զարգացումը՝ բանավոր և տրամաբանական մտածողության համեմատ: Եթե տեղեկատվությունը չի ընկալվել, ապա այն չի կարող հասկանալի, յուրացված լինել, չի կարող դառնալ անհատի սեփականությունը, նրա մշակույթի տարրը:

Տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների գործածությունն ուսման գործընթացում նպաստում է նաև երեխաների մոտիվացիայի աճին: Բացի նրանից, որ ՏՀՏ-ի գործածությամբ հնարավոր է ավելի հարուստ, բազմերանգ ու դինամիկ ուսումնական, դաստիարակչական նյութ ստեղծել և օգտագործել, դրա միջոցով նաև կարող ենք բովանդակությունը դարձնել ինտերակտիվ: Արդյունքում երեխան ոչ թե տեղեկատվության պասիվ ստացողն է, այլ հենց ինքն է կարող փոփոխել ու նույնիսկ ստեղծել բովանդակությունը: Իսկ այս ամենը համապատասխանում է ուսումնադաստիարակչական գործընթացի նկատմամբ ժամանակակից, կառուցողական մոտեցմանը, որը նախատեսում է գիտելիքի հայթայթում և ստեղծում հենց աշակերտի կողմից:

Համակարգի կիրառությունը շատ հեշտ է: Այն պահանջում է նվազագույն տեխնիկական հագեցվածություն՝ համացանցից միացված համակարգիչ կամ դյուրակիր պլանշետ, համացանցային դիտարկչով:

Նկ. 2. Ընտրել բաժինը

Մուտք գործելով համակարգ՝ այն առաջարկում է օգտատերին գրանցվել (նկ. 1): Գրանցումը հնարավորություն է տալիս, որ յուրաքանչյուր երեխա ունենա սեփական առաջադիմության գրանցման հնարավորություն, և ողջ գործընթացը ապահովի անձնակողմնորոշիչ մոտեցում: Հաջորդ քայլում մենք տեղափոխվում

ենք համակարգի հիմնական էջ: Հիմնական աշխատանքային էջում համակարգը օգտատիրոջն առաջարկում է ընտրել բաժինը (նկ. 2): Համակարգն առաջարկում է ոչ միայն թվեր, տառեր, այլև երեխաներին ծանոթացնում է գույների, կենդանիների, տարվա եղանակների, մրգերի, տարբեր երկրաչափական պատկերների հետ: Յուրաքանչյուր բաժին պարունակում է նաև ենթաբաժին և այսպես շարունակ: Համակարգի նախագծման հիմքում հաշվի են առնվել հետևյալ սկզբունքները՝ զարգացվածության ապահովում տարբեր բնագավառներից, համակարգի կիրառման դյուրություն, թեմաների շարունակականություն՝ պարզից ավելի բարդ: Հետազոտողները հիմնավորել են, որ երեխաներն առավել արագ ընկալում են երևույթները, երբ տեսողական տեղեկույթը ուղեկցվում է լսողական, ձայնային տեղեկատվությամբ: Այստեղ նույնպես համակարգը հնարավորություն է տալիս: Սեղմելով ենթաբաժնի ամեն մի պատկերի վրա՝ համակարգը երեխային պատմում է տվյալ երևույթի մասին, կազմակերպում ինտերակտիվ հարցուպատասխան (նկ. 3, 4, 5, 6): Բացի դրանից՝ համակարգում ներդրված է նաև հարցերի, խաղերի բաժին, որտեղ ներառված խաղերը զարգացնում են երեխաների հիշողության գործընթացները, ստիպում երեխային իրականացնել մտային տարբեր գործընթացներ՝ մտապահում, վերարտադրություն, երկխոսելու, հարց-պատասխան վարելու կարողություն և այլն:

Նկ. 3. Ընտանի կենդանիներ

Նկ. 4 Մրգերի և բանջարեղեն



Նկ. 5. Պատկերներ

Նկ. 6. Գույներ

Մշակված համակարգի կիրառման արդյունավետությունը ստուգելու համար կազմակերպվել է նաև փորձարկ Երևանի մի քանի մասնավոր նախակրթարաններում: Փորձարկին մասնակցել է ավելի քան 65 երեխա: Փորձարկի վերջում հետազոտվել է սովորական և համակարգով աշխատանքի արդյունավետության դինամիկան ստուգողական և փորձարարական խմբերում: Ընդ որում՝ ստացված արդյունքները դիտարկվել են ըստ **բարձր, միջին և ցածր** մակարդակների: Փորձարկի վերջում երեխաների զար-

գացվածության մակարդակները ստուգվել են ըստ համակարգի առաջարկող թեմաների: Ստացված արդյունքները վերլուծվել են Ms Excel համակարգչային ծրագրով՝ կիրառելով վիճակագրական և մաթեմատիկական բանաձևեր: Արդյունքները հետևյալն են (տրամագիր 1).



Տրամագիր 1. Էլեկտրոնային վեբ համակարգի կիրառմամբ երեխաների զարգացվածության ապահովման արդյունավետության դինամիկան

Փորձարկի արդյունքները հավաստեցին այն վարկածը, որ տեղեկատվական տեխնոլոգիաների նպատակաուղղված կիրառումը բավականաչափ արդյունավետ է: Մասնավորապես նմանատիպ համակարգերի կիրառումը երեխաների ընդհանուր զարգացվածության ապահովման գործընթացում խթանում է նրանց ինքնուրույնությունը, հետաքրքրությունը, ակտիվությունը. որակապես փոփոխվում է արդյունավետությունը:

Եզրակացություն: ՏՀՏ-ների ներդնումը և կիրառումը նախադպրոցական կրթության գործընթացում նպաստում է երեխաների ստեղծագործական ակտիվությանը, ուսումնահետազոտական դրդապատճառների ակտիվացմանը: Մշակված համակարգը հեշտ է կիրառելիության տեսանկյունից, եզակի է իր տեսակով հայ իրականության մեջ և արդյունավետ:

Նախադպրոցական տարիքի երեխաների ընդհանուր զարգացվածության ապահովման գործընթացում էլեկտրոնային այս համակարգի մշակումն ու ներդնումը, անտարակույս, չի հավակնում լիարժեք և կատարյալ լինելու: Այնուհանդերձ, հետազոտության արդյունքները կարող են արդյունավետորեն կիրառվել նախադպրոցական կրթության բնագավառում հետագա զարգացումների գերակա ուղղությունների մշակումների համար:

Օգտագործած գրականության ցանկ

1. Беспалько В. П. (2002). Образование и обучение с участием компьютеров (педагогика третьего тысячелетия), М.: Изд. НПО “МОДЕК”, 352 с

2. Васильева Е. А. (2011). Роль педагога в формировании информационного пространства дошкольника / Е.А. Васильева // Управление дошкольным образовательным учреждением, №9, 96 с.

3. Калаш И. (2011). Возможности информационных и коммуникационных технологий в дошкольном образовании: аналитический обзор / И. Калаш. М.: Институт ЮНЕСКО по информационным технологиям в образовании, 176 с.

4. Смирнов А. В. (2005) Технические средства в обучении и воспитании детей /А.В. Смирнов, М.: Академия, 230 с.

5. Effective Classroom Practice: Preschoolers and Kindergarteners. [online]. Technology and Young Children. National Association for the Education of Young Children – Promoting excellence in early childhood education, 2012. https://www.naeyc.org/resources/topics/technology-and-media/preschoolers-and-kindergartners [accessed Mar 17 2021].

6. Mohammad Mona and Heyam Mohammad (2012). Computer integration into the early childhood curriculum. Education. Volume 133, No. 1, pp. 97-116.

7. Young K. S. and Nabucco de Abreu C., (2011). Internet addiction: A handbook and guide to evaluation and treatment. John Wiley & Sons, Hoboken, New Jersey. p 314.

ИННОВАЦИОННЫЙ ИНСТРУМЕНТ ДЛЯ РАБОТЫ С ДОШКОЛЬНИКАМИ С ПОМОЩЬЮ ЭЛЕКТРОННОЙ ВЕБ-СИСТЕМЫ

Асатрян С.М.
ЕГУ, Армения
Тадевосян А.А.
АГПУ, Армения

Аннотация

Многочисленные исследования показывают, что корни многих проблем в жизни человека уходят в детство. Проблемы самоутверждения человека, его социальной роли и адаптации в обществе обусловлены особенностями дошкольников.

Психические структуры ребенка в дошкольном возрасте, включая личностные, находятся в одном целостном интегрированном состоянии, в котором трудно и в принципе неправильно различать разные аспекты его психики, поскольку они тесно взаимосвязаны друг с другом.

Дошкольное образование – это краеугольный камень, от которого зависит качество дальнейшего образования ребенка.

Это возлагает на педагога особую ответственность. Его задача не только научить счету и письму, но и заложить в ребенке глубокую основу, раскрыть его лучшие качества, показать способы учебной деятельности. Последнее особенно актуально в современном быстро меняющемся, информационно-затопленном мире. Надо научить ребенка работать с информацией, научить его учиться.

В дошкольном возрасте ребенок начинает распознавать формы и размеры предметов, их сходства и различия на основе их характеристик. В связи с этим при работе с дошкольниками необходимо создать среду, в которой будут развиваться вновь приобретенные личностные качества этих детей: самостоятельность, стремление узнавать что-то новое, любознательность.

С этого возраста необходимо активно развивать у ребенка смелые творческие способности и воображение, внимание и мышление. Дети в основном воспринимают окружающий мир через органы чувств, поэтому необходимо организовать игры, которые будут наглядными, сенсорными, дидактическими.

Проблема. Коренное изменение характера образования в наш информационный век тесно связано с распространением современных средств информации и коммуникации. Проблема развития ИКТ и развития в сфере образования особенно актуальна для развивающихся или слабо развитых стран. Могут ли страны, борющиеся с бедностью и экономической отсталостью, позволить себе расточительные размышления об использовании и распространении ИКТ в образовании, тратя огромные суммы денег на такие программы?

К тому же у большинства постсоветских стран, в том числе и у Армении, есть и другие проблемы. Достаточно высокий уровень образования общества с существующими традициями обязывает проводить фундаментальную переоценку и изменения на разных уровнях образования.

С другой стороны, в Республике Армения произошел переход к всеобщей инклюзии на всех уровнях образования, и все это вызывает вопросы:

1. Как ИКТ используются для работы с дошкольниками?

2. Как ИКТ влияют на общее развитие дошкольников?

Эти вопросы находятся в центре внимания многих современных исследователей, которые рассматривают их с психологической, медицинской, технической и педагогической точек зрения.

Цель. Целью нашего исследования является разработка и тестирование электронной веб-системы, которая может быть использована в процессе обеспечения общего развития дошкольников.

Новизна исследования. Чтобы сделать взаимодействие ребенка и педагога более интересным,

интерактивным, была разработана электронная веб-система для поддержки общего развития дошкольников, уникальная в своем роде в армянской действительности, простая в использовании и обеспечивающая высокую эффективность дошкольного образования.

Ключевые слова: дошкольное образование, информационные и коммуникационные технологии, общее развитие, средства ИКТ, образование, воспитание.

Список использованной литературы

1. Беспалько В. П. (2002). Образование и обучение с участием компьютеров (педагогика третьего тысячелетия). М.: Изд. НПО “МОДЕК”, 352 с
2. Васильева Е. А. (2011). Роль педагога в формировании информационного пространства дошкольника / Е.А. Васильева // Управление дошкольным образовательным учреждением, №9, 96 с.
3. Калаш И. (2011). Возможности информационных и коммуникационных технологий в дошкольном образовании: аналитический обзор / И. Калаш. –М.: Институт ЮНЕСКО по информационным технологиям в образовании,. – 176 с.
4. Смирнов А. В. (2005) Технические средства в обучении и воспитании детей /А.В. Смирнов. М.: Академия, 230 с.
5. Эффективная практика: Дошкольники и воспитателями. [онлайн]. Технологии и дети. Национальная ассоциация образования детей младшего возраста - Содействие совершенствованию в дошкольном образовании, 2012 г. https://www.naeyc.org/resources/topics/technology-and-media/preschoolers-and-kindergartners [17/03/2021].
6. Мохаммад Мона и Хейям Мохаммад (2012). Интеграция компьютера в учебную программу для детей младшего возраста. Образование. Том 133, № 1, с. 97–116.
7. Янг К С. и Набуко С., (2011). Интернет зависимость. Справочник и руководство по оценке и лечению, Хобокен, Нью-Джерси . 314 с.

An innovative tool for working with preschoolers using a web-based system

Asatryan S. M.
YSU, Armenia
Tadevosyan A. A.
ASPU, Armenia

Summary

Numerous studies show that the roots of many problems in a person's life go back to childhood. The problems of human self-affirmation, social role and adaptation in society are due to the characteristics of preschoolers.

The mental structures of a child in preschool age, including personal ones, are in one holistic integrated state, in which it is difficult and, in principle, not correct to distinguish between different aspects of his psyche, since they are closely interconnected with each other.

Preschool education is the cornerstone on which the quality of the child's further education depends.

This makes the teacher's responsibilities. His task is not only to teach counting and writing, but also to lay a deep foundation in the child, to reveal his best qualities, to show the ways of educational activity. The latter is especially relevant in today's rapidly changing, information-flooded world. It is necessary to teach the child to work with information, teach to learn.

In preschool age, the child begins to recognize the similarities, differences, shapes and sizes of objects based on their characteristics. In this regard, when working with preschoolers, it is necessary to create an environment in which the newly acquired personal qualities of these children will develop: independence, the desire to learn something new, curiosity.

From this age, it is necessary to actively develop the child's bold creativity and imagination, attention and thinking. Children mainly perceive through the senses, so it is necessary to organize games that will be visual, sensory, didactic.

Problem. A fundamental change in the nature of education in the information age is closely associated with the spread of modern information and communication. The problem of ICT development and development in education is especially relevant for developing or less developed countries. Can countries fighting poverty and underdevelopment afford to wasteful speculation on the use and diffusion of ICT in education, spending huge sums of money on such programs?

In addition, most post-Soviet countries, including Armenia, have special problems. A sufficiently high level of education, societies with traditions are obliged to carry out fundamental reassessments and changes at

different levels of education. On the other hand, in the Republic of Armenia there has been a transition to universal inclusion at all levels of education, and all this raises questions.

1. How ICT is used to work with preschool children?

2 . How do they affect the overall development of preschoolers?

These questions are at the center of attention of many modern researchers who consider them from psychological, medical, technical and pedagogical points of view.

Purpose. The aim of our research is to develop and test an electronic web system that can be used in the process of ensuring the general development of preschoolers.

Research novelty. In order to make the interaction between the child and the teacher more interesting, interactive, has developed an electronic web-based system to support the overall development of preschool children, unique of its kind in the Armenian reality, easy to use and provides high efficiency.

Keywords: preschool education, information and communication technologies, general development, ICT tools, education, upbringing.

References:

1. Bespalko V.P. (2002). Education and training with the participation of computers (pedagogy of the third millennium). M.: Ed. NPO "MODEK", 352 p.
2. Vasilieva E.A. (2011). The role of the teacher in the formation of the information space of the preschooler / E.A. Vasilyeva // Management of a preschool educational institution. No. 9, 96 p.
3. Kalash I. (2011). Possibilities of information and communication technologies in preschool education: an analytical review / I. Kalash. M.: UNESCO Institute for Information Technologies in Education, 176 p.
4. Smirnov A.V. (2005) Technical means in teaching and upbringing of children / A.V. Smirnov. M.: Academy, 230 p.
5. Effective Classroom Practice: Preschoolers and Kindergarteners. [online]. Technology and Young Children. National Association for the Education of Young Children – Promoting excellence in early childhood education, 2012. https://www.naeyc.org/resources/topics/technology-and-media/preschoolers-and-kindergartners [accessed Mar 17 2021].
6. Mohammad Mona and Heyam Mohammad (2012). Computer integration into the early childhood curriculum. Education. Vol-ume 133, No. 1, pp. 97-116.
7. Young K. S. and Nabucco de Abreu C., (2011). Internet addiction: A handbook and guide to evaluation and treatment. John Wiley & Sons, Hoboken, New Jersey, p 314.

Материал был представлен и отправлен на рецензию: 18.03.2021
Принято к публикации: 03.05.2021
Рецензент: канд пед. наук, доцент Лусине Айрапетян

The material was submitted and sent to review:18.03.2021
Was accepted for publication: 03.05.2021
Reviewer: Assoc. Prof., PhD. Lusine Hayrapetyan

373.31.02

ՄԵԴԻԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Եգանյան Գայանե
ՀՊՄՀ, Հայաստան
Քիլէրճեան Պէթի
ՀՊՄՀ, Հայաստան

Համառոտ ներածական: 21-րդ դարի արժեքների ընկալումները տանում են դեպի գլոբալիզացիա: Այսօր մեդիան ներխուժել է մեր կյանքի բոլոր ոլորտներ: ԶՀՄ-ները դեռ վաղ մանկությունից անբաժանելի դեր են խաղում երիտասարդների կյանքում: